

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ / CIVIL PROCEDURE /
ГРАЖДАНСКИЙ ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2025.10-12-68>

ՀԱՅԱՐՓԻ ԶԱՐԳԱՐՅԱՆ

*ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

HAYARPI ZARGARYAN

*Judge of the Anti-Corruption Appeal Court of the RA,
Candidate of Legal Sciences*

АЙАРПИ ЗАРГАРЯН

*Судья Апелляционного антикоррупционного суда РА,
Кандидат юридических наук*

**ԸՆՏԱՆԵԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂԱԾ
ՊԱՐՏԱԴԻՐ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ
ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ**

**MANDATORY CONCILIATION DIRECTED AT THE REGULATION OF
FAMILY DISPUTES: SOME PROBLEMS IN LAW ENFORCEMENT
PRACTICE**

**НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОБЯЗАТЕЛЬНОЙ МЕДИАЦИИ ДЛЯ
РАЗРЕШЕНИЯ СЕМЕЙНЫХ СПОРОВ В ПРАВОПРИМЕНИТЕЛЬНОЙ
ПРАКТИКЕ**

Ներածություն

Ընտանեկան իրավունքի և օրենսդրության արդի զարգացումները շարունակականության մեջ առաջացնում են նոր իրավական հնարավորություններ՝ ուղղված, ի թիվս այլնի, նաև վեճերի արագ և արդյունավետ կարգավորմանը, ինչպես նաև դատարանների բեռնաթափմանը: Սակայն այդ օրենսդրական կարգավորումների թերի լինելը երբեմն ծնում է նոր խնդիրներ, որոնք, չնայած գործնական կիրառման ընթացքում իրավակիրառողների կողմից տարաբնույթ լուծումներով հաղթահարմանը, այդուհանդերձ պահանջում են օրենսդրության կատարելագործում, ինչպես նաև պրակտիկայի միատեսակություն:

Ընտանեկան իրավունքի և ընտանեկան վեճերի կարգավորմանն ուղղված օրենսդրական

նորամուծություններից է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության ինստիտուտը:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծի հիմնավորումներում¹ ասվում է. «Նախագծով առաջարկվել է ընտանեկան գործերով մինչև դատարան դիմելը նախատեսել պարտադիր հաշտարարության պահանջ, ինչը զգալիորեն կթեթևացնի դատարանների ծանրաբեռնվածությունը՝ հաշվի առնելով այն հավանականությունը, որ այս փուլում վեճը կավարտվի կողմերի հաշտությամբ: Հարկ է նկատել, որ նման դեպքերում Նախագծով նախատեսվել է, որ հաշտարարությունը պետք է իրականացվի կողմերի համար անվճար հիմունքներով, ինչը համահունչ է նաև միջազգային լավագույն փորձին»:

Իրավաստեղծ մեդիացիայի եվրոպական ձեռնարկի (բնագիր լեզվով՝ European Handbook for Mediation Lawmaking²) համաձայն՝ նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարության պահանջը իրավաչափ է և չի խախտում անձի դատական պաշտպանության իրավունքը, եթե ապահովվեն հետևյալ պայմանները.

ա) սահմանվի հաշտարարության կարճ ժամկետներ՝ դատարան դիմելու վաղեմության ժամկետների պահպանմամբ,

բ) ապահովվի հաշտարարության առցանց հասանելիություն,

գ) կողմերին տրվի հաշտարարությանը առանց իրավաբանի մասնակցության հնարավորություն,

դ) բացառվի հաշտարարության արդյունքում կողմերի համար պարտադիր որոշումների կայացման հնարավորությունը: Պարտադիր հաշտարարության փուլից հետո արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքը կիրառործվի, եթե հաշտությամբ վեճը լուծելու վերաբերյալ համաձայնություն ձեռք չբերվի:

Հիմնական հետազոտություն

Պարտադիր հաշտարարության պահանջը համատեղելի է արդյունավետ դատական պաշտպանության սկզբունքի հետ, պայմանով, որ հաշտարարության արդյունքում կողմերի համար պարտադիր որոշում չի կայացվում, այն չի հանգեցնում վեճը դատական պաշտպանության ներկայացնելու էական ուշացման և կողմերի ծախսերի աճի³:

16.11.2022 թվականին ընդունված և 26.12.2022 թվականին ուժի մեջ մտած «Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-435-Ն օրենքի 1-ին հոդվածով սահմանվեց հետևյալը.

««Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

¹ Տե՛ս «Հիմնավորում «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների ընդունման», <https://www.e-draft.am/projects/3259/about> հղմամբ:

² Տե՛ս European Commission For The Efficiency Of Justice (CEPEJ), European Handbook for Mediation Lawmaking, Strasbourg, 13 and 14 June 2019, էջ 66-69:

³ Տե՛ս Livio Menini, Maria Antonia Rampanelli v Banco Popolare Società Cooperativa գործով, թիվ C 75/16 75/16 գանգատ, Վերոնայի շրջանային դատարան, Առաջին պալատի 14.06.2017 թվականի վճիռ, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:62016CJ0075> հղմամբ:

«2.1. Ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով ծնողական իրավունքների իրականացման, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերի: Սույն մասով սահմանված դրույթի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 56-րդ հոդվածի 3-րդ մասով, 57-րդ և 58-րդ, 60-րդ հոդվածներով, 61-րդ հոդվածի 3-րդ մասով, 62-րդ և 63-րդ, 66-րդ հոդվածներով սահմանված գործերի վրա».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Հաշտարարությունը կարող է իրականացվել առցանց եղանակով՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում:».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Սույն հոդվածի 2.1-ին մասով նախատեսված գործերով նախքան դատարան դիմելը կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ՝

1) կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից.

2) կողմերից մեկը քրեական պատասխանատվության է ենթարկվել մյուս կողմի կամ նրա զավակի, ծնողի, պապի կամ տատի, եղբոր կամ քրոջ նկատմամբ դիտավորությամբ հանցագործություն կատարելու համար.

3) կողմերից մեկը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ, գտնվում է կալանքի տակ կամ կրում է ազատությունից զրկելու հետ կապված պատիժ:».

Նշված փոփոխության հետ մեկտեղ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 7-րդ հոդվածը ձևակերպվել է հետևյալ կերպ. «Ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական կարգով, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ համապատասխան պետական մարմինների կամ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից: «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ընտանեկան վեճերով նախքան դատարան դիմելը հաշտարարության իրականացումը պարտադիր է»⁴:

Այսպիսով, օրենսդիրը սահմանել է, որ նախքան դատարան դիմելը հաշտարարությունը պարտադիր է՝

- ամուսնալուծության,
- երեխայի բնակության վայրի որոշման,
- ալիմենտի (ապրուստավճարի) բռնագանձման,
- ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման,
- երեխայի հետ շփմանը, դաստիարակությանն ու կրթությանը վերաբերող հարցերով

⁴ Տե՛ս ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին թիվ ՀՕ-438-Ն օրենքը, ընդունված 16.11.2022 թվականին, www.arlis.am հղմամբ:

ծնողական իրավունքների իրականացման,

- երեխայի տեսակցության կարգ սահմանելու,
- ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով:

Հատկանշական է, որ ընտանեկան որոշ գործերի տեսակների համար սահմանելով պարտադիր հաշտարարություն՝ մեր համոզմամբ՝ օրենսդիրը «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում, ՀՀ ընտանեկան օրենսգրքում և այլ օրենքներում ու իրավական ակտերում լրացումները փաստացի կատարել է թերի:

Մասնավորապես, սույն աշխատանքում հեղինակիս կողմից անդրադարձ կկատարվի ալիմենտի բռնագանձմանը և պահանջի այդ տեսակին առնչվող որոշ նյութաիրավական, ինչպես նաև պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրման հետ կապված դատավարական որոշ հիմնախնդիրներին:

Այսպես, սահմանելով նախքան դատարան դիմելը՝ պարտադիր հաշտարարություն ալիմենտի բռնագանձման մասին գործերով, օրենսդրի կողմից այդ ցանկից անհասկանալի տրամաբանությամբ դուրս են թողնվել լրացուցիչ ծախսերի բռնագանձմանը վերաբերող գործերը (ՀՀ ընտ. օր. 74-րդ հոդված), որոնք նույնպես ուղղված են երեխայի լավագույն շահի սպասարկմանը և կրկին, ինչպես երեխայի իրավունքներին վերաբերող այլ գործերը, որոնք ունեն լուծման հրատապություն:

Հարկ է արձանագրել, որ օրենսդրի ուշադրությունից դուրս է մնացել ՀՀ ընտանեկան օրենսգրքի ողջ 12-րդ գլուխը՝ **«ԾՆՈՂՆԵՐԻ ՈՒ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԱԼԻՄԵՆՏԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** վերտառությամբ:

Այսպես, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են **դատական** կարգով»:

Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողներից ալիմենտի բռնագանձումը կատարվում է **դատական** կարգով (...)»:

Ինչպես երևում է օրենսդրական ձևակերպումներից, դրանք մնացել են անփոփոխ, և փաստացի ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում երեխաների ապրուստի միջոցների բռնագանձման հարցի լուծումը հիշյալ հոդվածների տառացի մեկնաբանությամբ վերապահվում է բացառապես դատարաններին:

Մեր համոզմամբ՝ ալիմենտի բռնագանձման գործերով պարտադիր հաշտարարություն սահմանվելու դեպքում այս հոդվածներն անխտիր պահանջում են փոփոխություններ և լրացումներ, և այդպիսիք պետք է բովանդակեն ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում նախքան դատարան դիմելը հաշտարարին դիմելու պարտադիրության մասին պահանջ:

Ուստիս **առաջարկվում է** հիշյալ հոդվածներում կատարել հետևյալ լրացումները.

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասը ձևակերպել հետևյալ կերպ. «Եթե ծնողները ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) բռնագանձվում հարցը լուծելու համար ծնողները պարտավոր են դիմել հաշտարարությանը՝ բացառությամբ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշտարարությունն ավարտվելու պահից անձը կարող է դիմել դատարան»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասը ձևակերպել հետևյալ կերպ.

«Երեխաների համար ալիմենտ վճարելու վերաբերյալ նրա ծնողների միջև համաձայնության բացակայության դեպքում ծնողները պարտավոր են դիմել հաշտարարությանը՝ բացառությամբ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշտարարությունն ավարտվելու պահից անձը կարող է դիմել դատարան՝ ծնողներից ալիմենտի բռնագանձումը դատական կարգով կատարելու համար (...):»:

Ընդ որում, համարժեք փոփոխության է ենթակա նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասը, ըստ որի՝ «Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում անաշխատունակ չափահաս զավակների համար ալիմենտի չափը՝ կայուն դրամական գումարով, որոշում է **դատարանը**»:

Այս ձևակերպման մեջ նույնպես բացակայում է որևէ նշում առ այն, որ ալիմենտ վճարելու համաձայնության բացակայության դեպքում հարցը ենթակա է կարգավորման նախ՝ հաշտարարության միջոցով, ապա դատական կարգով: Ընդ որում, հարկ է նկատել, որ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով որևէ բացառություն չի սահմանվել անաշխատունակ չափահաս զավակների, ինչպես նաև ամուսինների և նախկին ամուսինների, ընտանիքի մյուս անդամների միջև ալիմենտային պարտավորությունների վերաբերյալ, որպիսի իրողությունը վկայում է այն մասին, որ բոլոր տեսակի ալիմենտային պարտավորությունների շրջանակներում ալիմենտի բռնագանձման պահանջի մասին գործերը վերապահվել են հաշտարարության ինստիտուտին, սակայն այդ մասին ՀՀ ընտանեկան օրենսգրքի հատուկ նորմերով որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել:

Հարկ է նաև նկատել, որ նյութական օրենսդրության մեջ համարժեք փոփոխություններ և լրացումներ չկատարելուց զատ՝ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում նույնպես որևէ դրույթ չի ամրագրվել առ այն, թե հաշտարարն ընտանեկան վեճերի կարգավորման գործընթացում, որ օրենսդրությունն է հիմք ընդունելու, այլ կերպ՝ առկա չէ որևէ հղում ՀՀ ընտանեկան օրենսգրքին կամ այլ օրենքներին և իրավական ակտերին: Այնինչ, վերը նշված նյութական իրավունքի նորմերում առանձին փոփոխություններ կատարելուց հնարավոր կլինեի խուսափել նաև այլ լուծման պարագայում, երբ, օրինակ, «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում ամրագրվեր ընդհանուր դրույթ առ այն, որ հաշտարարը ընտանեկան վեճեր քննելիս պետք է հիմք ընդունի ՀՀ ընտանեկան օրենսգրքով և այլ օրենքներով ու իրավական ակտերով ամրագրված հատուկ դրույթները:

Մեր համոզմամբ, հաշտարարի իրավասությանը վերապահված ընտանեկան վեճերի լուծման համար հաշտարարի կողմից օրենքով սահմանված կարգին համապատասխան գործընթաց և արդյունք գրանցելու համար հաշտարարը պետք է վեճի կարգավորման համար հիմք ընդունի օրենսդրական այն բոլոր կարգավորումները, որոնք սահմանում են անձի իրավունքների պաշտպանության նվազագույն երաշխիքները, օրինակ՝ ալիմենտի չափի նվազագույն շեմը սահմանված է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածով, ըստ որի՝ ամենամսյա վճարումների չափը յուրաքանչյուր երեխայի համար չպետք է պակաս լինի սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափից, իսկ գործազրկության նպաստ ստացող ծնողներից ալիմենտ բռնագանձելիս՝ գործազրկության նպաստի 20 տոկոսից: Հաշտարարի մասնակցությամբ վեճի կարգավորման ընթացքում հաշտարարը պետք է ապահովի այս կանոնի պահպանումը, որն ուղղված է երեխայի լավագույն շահի երաշխավորմանը: Նման նվազագույն երաշխիքներ սահմանված են նաև այլ օրենսդրական ակտերով, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, որում ամրագրված հատուկ նորմերով սահմանված երաշխիք-

ները պետք է պահպանվեն ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին վեճերով և այլն:

Առկա չէ նաև որևէ հղում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքին՝ բացառությամբ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, որի ուժով՝ դատարանի կողմից նշանակված հաշտարարության առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Այսինքն, օրենսդիրը դատարանի կողմից հաշտարարության նշանակման դեպքում հղում է կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգին, սակայն մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության դեպքում որևէ նշում առկա չէ՝ այն պայմաններում, երբ պրակտիկայում «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վեճը հաշտության համաձայնությամբ լուծվելու պարագայում այդ հաշտության համաձայնությունը կյանքի չի կոչվում, քանի դեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 39-րդ գլխով սահմանված կարգով այն չի հաստատվել դատարանի վճռով⁵:

Ուշագրավ է նաև ՀՀ ընտանեկան օրենսգրքի 16-րդ գլուխը՝ «**ԱԼԻՄԵՆՏԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ԿԱՐԳԸ**» վերտառությամբ:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում և ՀՀ ընտանեկան օրենսգրքի 7-րդ հոդվածով կատարված փոփոխությունների արդյունքում օրենսդիրն անփոփոխ է թողել նաև ալիմենտի վճարման և բռնազանձման կարգին նվիրված հատուկ նորմերը, որոնք ինչպես նախքան օրենսդրական փոփոխությունները, այնպես էլ դրանցից հետո սահմանում են բացառապես դատական կարգով ալիմենտի բռնազանձման իրավական հնարավորությունը:

Նման պայմաններում ինքնին խնդրահարույց է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 94-րդ հոդվածի ձևակերպումը, ըստ որի՝ «*Ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնության բացակայության դեպքում սույն օրենսգրքի 68-86-րդ հոդվածներում նշված ընտանիքի անդամները կարող են ալիմենտ բռնազանձելու պահանջով դիմել դատարան*»:

Այս կարգավորումը որևէ փոփոխության նույնպես չի ենթարկվել, և առկա խմբագրությամբ դրույթի տառացի մեկնաբանությունից բխում է, որ ալիմենտ վճարելու համաձայնության բացակայության դեպքում կրկին ալիմենտի բռնազանձման հարցը կարող է լուծվել բացառապես դատական կարգով, այնինչ այս գործընթացն օրենսդրի կողմից արմատապես փոխվել է՝ սահմանելով նախքան դատարան դիմելը պարտադիր կարգով հաշտարարին դիմելու պարտականություն՝ բացառությամբ «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված բացառիկ դեպքերի:

Մեր համոզմամբ՝ ընտանիքի անդամների՝ միմյանցից ալիմենտ բռնազանձելու վեճի առկայության դեպքում ՀՀ ընտանեկան օրենսգրքի 16-րդ գլուխն ուղղակիորեն պետք է ենթարկվեր օրենսդրական փոփոխության (եթե, իհարկե, «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում ընդհանուր դրույթ սահմանելու միջոցով հղում չկատարվեր ՀՀ ընտանեկան օրենսգրքին)՝ սահմանելով ինչպես նախքան դատարան դիմելը՝ հաշտարարությանը դիմելու օրենսդրական պարտադիր պահանջի մասին նշում, այնպես էլ ալիմենտի բռնազանձման և վճարման ժամկետներին վերաբերող դրույթներում հատուկ նշում, քանի որ գործող խմբագրությամբ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասը ամրագրում է, որ «**Ալիմենտ հատկացվում է դատարան դիմելու պահից**»: Անցած ժամանակահատվածի համար ալիմենտ կարող է

⁵ Տե՛ս, օրինակ, թիվ ԼԴ/1169/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 24.09.2025 թվականի վճիռը, ինչպես նաև ԵԴ2/10810/02/25 քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 28.10.2025 թվականի վճիռը, www.datalex.am հղմամբ:

բռնագանձվել դատարան դիմելու պահին նախորդող երեք տարվա համար, եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով», հետևաբար՝ հարց է ծագում, թե *արդյոք հաշվարարությանը դիմելու պարագայում ի՞նչ պահից է ալիմենտը հատկացման ենթակա, և արդյոք անցած ժամանակահատվածին վերաբերող հատուկ կանոնը կիրառելի է նաև հաշվարարության միջոցով վեճի կարգավորման գործընթացում:*

Այսպես, «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «Հաշտարարությունն սկսվում է հաշտարարություն իրականացնելու վերաբերյալ մյուս կողմին գրավոր առաջարկ ներկայացնելու պահից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. *Եթե օրենքով նախատեսված է մինչև դատարան դիմելը պարտադիր հաշվարարության իրականացման պահանջ, կամ դատարանի կողմից իր նախաձեռնությամբ նշանակվել է հաշվարարություն, ապա հաշվարարության սկիզբ է համարվում հաշվարարի առաջին հանդիպումը կողմերի կամ նրանցից մեկի հետ:*

Նշված կարգավորման համաձայն՝ ընտանեկան գործերով, որոնցով օրենսդիրը սահմանել է նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարություն, հաշտարարության սկիզբ է համարվում հաշտարարի հետ առաջին հանդիպումը:

Հարկ է նկատել, որ ի տարբերություն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման, երբ օրենքով սահմանված կարգով հարուցված հայցադիմումի ուժով հայցը դատարան ներկայացվելու պահից բռնագանձման ենթակա ալիմենտը պետք է հաշվարկվի (այսինքն՝ հաշվարկի սկիզբը դատարան դիմելու պահն է), հաշտարարության պարագայում չի կարող կիրառվել օրենքի անալոգիա այն իմաստով, որ հաշտարարին դիմելու պահը կամ այլ կերպ ասած՝ հաշտարարության սկիզբը հաշտարարի հետ առաջին հանդիպումն է, քանի որ ինքնին հաշտարարին դիմելը դեռևս չի երաշխավորում վեճի կարգավորում այդ ընթացակարգով: Մասնավորապես, «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հաշտարարության գործընթացն ավարտվում է, եթե՝

1) կողմերի միջև կնքվում է վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնություն:

2) հաշտարարը հայտարարում է այնպիսի հանգամանքների առկայության մասին, որոնք բացառում են վեճը հաշտարարության միջոցով լուծելու հնարավորությունը:

3) կողմերի միջև առկա է համաձայնություն առանց հաշտության համաձայնություն կնքելու հաշտարարության գործընթացի ավարտման վերաբերյալ:

4) կողմերից մեկը հաշտարարին գրավոր հայտնում է առանց հաշտության համաձայնություն կնքելու հաշտարարության գործընթացի ավարտման ցանկության մասին:

5) կողմերից մեկը հաշտարարին գրավոր հայտնում է հաշտարարության գործընթացին մասնակցելուց հրաժարվելու մասին:

6) կողմը հաշտարարին թեև գրավոր չի հայտնում հաշտարարության գործընթացին մասնակցելուց հրաժարվելու մասին, սակայն առանց հարգելի պատճառի հրաժարվում է մասնակցել հաշտարարության առաջին հանդիպմանը:

7) հաշտարարության իրականացման ընթացքում ի հայտ է եկել սույն օրենքի 9.1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանք կամ փոխկապակցվածության հիմք, և սույն օրենքով սահմանված կարգով հաշտարարը և կողմերը չեն որոշել անտեսել այդ հիմքը:

8) հաշտարարը հայտարարում է երեխայի լավագույն շահի պաշտպանության նպատակով հաշտարարության ավարտման անհրաժեշտության մասին»:

Ինչպես երևում է հաշտարարության ավարտի հիմքերից՝ հաշտարարությունը ոչ միշտ կարող է ավարտվել վեճի լուծմամբ, այլ հաճախ կողմերը կարող են ձեռք չբերել համաձայնություն խնդրո առարկա հարցերի շուրջ կամ հաշտարարին ինքն օրենքով սահմանված հիմքի առկայությամբ առանց վեճը լուծելու ավարտի հաշտարարությունը: Հետևաբար՝ կարող ենք արձանագրել, որ հաշտարարության ավարտի հիմքերից «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի առկայության դեպքում է միայն հնարավոր անդրադառնալ այն հարցին, թե որ պահից է ենթակա հաշվարկման բռնագանձման ենթակա ալիմենդ, այն է՝ երբ հաշտարարության արդյունքում կողմերի միջև կնքվում է վեճը հաշտությամբ լուծելու վերաբերյալ համաձայնություն, որում ըստ էության, կողմերն ազատ են սահմանելու այդ ժամկետը:

Մեր համոզմամբ՝ հաշվի առնելով հաշտարարության՝ ըստ էության վեճի լուծմամբ ավարտելու միակ հիմքը, այն է՝ հաշտության համաձայնության կնքումը, կարող է և պետք է բովանդակի նաև այն հարցի պատասխանը, թե նախքան հաշտարարին դիմելը որ ժամանակահատվածի համար են կողմերը ձեռք բերում ալիմենտ վճարելու համաձայնություն: Ավելին, ի տարբերություն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի, որը պարունակում է անցած ժամանակահատվածի համար դատարան դիմելուն նախորդող երեք տարվա համար ալիմենտ բռնագանձելու իրավական հնարավորությունը (եթե դատարանով հաստատվել է, որ մինչև դատարան դիմելը միջոցներ են ձեռնարկվել ապրուստի միջոց ստանալու համար, բայց ալիմենտը չի ստացվել ալիմենտ վճարելու պարտավոր անձի կողմից դա վճարելուց խուսափելու հետևանքով), հաշտարարությանը դիմելու պարագայում, մեր կարծիքով, նման իրավական կարգավորումը չի կարող գործել, քանի որ հաշտարարության բուն էությունը վերաբերում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ վեճը կարգավորելուն և թողնված է հաշտարարությանը դիմած անձանց ազատ կամահայտնությանը:

Վերադառնալով այն խնդրին, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի միայն 7-րդ հոդվածն է ենթարկվել փոփոխության՝ պարտադիր հաշտարարության մասին հակիրճ «ակնարկով», պետք է արձանագրել նաև, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 12-րդ և 16-րդ գլուխներում առկա թերի կարգավորումները և օրենսդրական բացերը պահանջում են պրակտիկայում հրատապ լուծումներ, որոնք վերաբերում են նախևառաջ օրենքի մեկնաբանությանը և օրենսդրական բացերի հաղթահարմանը: Այսինքն, առկա է մի իրավիճակ, երբ օրենսգրքի ընդհանուր նորմը փոփոխվել է (լրացվել է), սակայն հատուկ նորմերը չեն ենթարկվել փոփոխությունների:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներով անդրադարձել է նաև օրենսդրական բացի հաղթահարման հարցերին՝ արձանագրելով,

1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը, որպես օրենսդրական բաց, կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել, կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից.

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքու-

թյուն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը:

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք⁶:

Մեր համոզմամբ՝ տվյալ դեպքում հաշտարարության ինստիտուտի ընդլայնմամբ և զարգացմամբ պայմանավորված ՀՀ ընտանեկան օրենսգրքի հատուկ նորմերում փոփոխություններ և լրացումներ չկատարելը հանդիսանում է օրենսդրական բաց, որն էլ իր հերթին պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, հետևաբար նման բացի հաղթահարումն օրենսդրի իրավասության շրջանակներում է:

Միևնույն ժամանակ, քանի դեռ օրենսդրի կողմից չեն կատարվել համապարփակ իրավական կարգավորումներ՝ օրենսդրական բացը պետք է հաղթահարվի իրավակիրառողների կողմից՝ օրենքի մեկնաբանության միջոցով:

Անդրադառնալով իրավակիրառ պրակտիկայում նշված օրենսդրական փոփոխություններից հետո ծագած որոշ հիմնախնդիրներին՝ հարկ ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված, մեր համոզմամբ, կրկին թերի լրացումներին և փոփոխություններին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ ՀՕ-436-Ն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ **Օրենսգրքի 122-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 1.1-1.4-րդ մասերով.**

«1.1. Օրենքով նախատեսված դեպքերում մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության պահանջ սահմանված լինելու դեպքում *հայցադիմումին կցվում է* հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրության բնօրինակը: Օրենքով նախատեսված դեպքերում առցանց հաշտարարության իրականացման պարագայում հայցադիմումին կարող է կցվել հաշտարարի էլեկտրոնային ստորագրությամբ հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը: «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այն դեպքերում, երբ որևէ հիմքով անձին թույլատրված է չսպառել պարտադիր հաշտարարության պահանջը, կամ պարտադիր հաշտարարության իրականացումն օրենքով նախատեսված դեպքերում անհնարին է, ապա հայցադիմումին կցվում է օրենքով նախատեսված այդ հիմքերը հիմնավորող՝ օրենքով նախատեսված թույլատրելի ապացույց:

1.2. «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված փաստաթղթի փոխարեն *հայցադիմումին կցվում է* «Ընտանիքում բռնության կանխարգելման,

⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴԱՈ-209 որոշումները, <https://concourt.am/decision/decisions/> հղմամբ:

ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշման պատճենը:

1.3. «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-3-րդ կետերով սահմանված դեպքերում սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված փաստաթղթի փոխարեն *հայցադիմումին կցվում է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պատճենը:*

1.4. «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված փաստաթղթի փոխարեն *հայցադիմումին կցվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից հաշտարարի նշանակման անհնարինության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության տրամադրած տեղեկանքը:*

Հարկ է նկատել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 122-րդ հոդվածը վերաբերում է **հայցադիմումին կցվող փաստաթղթերի ցանկին**, և օրենսդրի կողմից մինչև դատարան դիմելն ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության ինստիտուտը հիշատակվել է հենց այս նորմի մեջ:

Մինչդեռ մեր համոզմամբ՝ նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարությունն ինքնին ինքնուրույն ինստիտուտ է, գործընթաց, որի պահպանման իմպերատիվությունն առնվազն ենթադրում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ առանձին բաժնի կամ գլխի ամրագրում, որպիսին սահմանվել է օրինակ՝ «Արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վարույթ»-ի պարագայում (գլուխ 39):

Այսպես, փաստացի կատարված օրենսդրական փոփոխությունների ուժով մինչև դատարան դիմելն ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության պահանջ նախատեսված լինելու պայմաններում օրենսդրի կողմից այդ պահանջի պահպանվածությունը հայցադիմումը դատարան ներկայացնելիս **ենթակա է ստուգման միայն հայցադիմումին կցված փաստաթղթերի լրակազմի ստուգմամբ:**

Այն է՝ հայցադիմումին կցվում է հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրության բնօրինակը կամ հաշտարարի էլեկտրոնային ստորագրությամբ հաշտարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը, իսկ այն դեպքում, երբ «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով որևէ հիմքով անձին թույլատրված է չսպառել պարտադիր հաշտարարության պահանջը, կամ պարտադիր հաշտարարության իրականացումն օրենքով նախատեսված դեպքերում անհնարին է, ապա հայցադիմումին կցվում է օրենքով նախատեսված այդ հիմքերը հիմնավորող՝ օրենքով նախատեսված թույլատրելի ապացույց:

Միևնույն ժամանակ, օրենսդիրը հայցադիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկին է դասել նաև «Հաշտարարության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքերում՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված *պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշման պատճենը*, «Հաշտարարության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի 2-3-րդ կետերով սահմանված դեպքերում՝ *դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պատճենը*, «Հաշտարարության մասին» Հա-

յաստանի Հանրապետության օրենքի 11.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից հաշտարարի նշանակման անհնարինության վերաբերյալ *Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության տրամադրած տեղեկանքը*:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ մինչև դատարան դիմելը ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարություն անցնելու օրենսդրական պահանջը պահպանված լինելու հարցը դատարանը ստուգման առարկա պետք է դարձնի հայցադիմումը վարույթ ընդունելու հարցի լուծման փուլում, իսկ այդ պահանջի պահպանվածությունը օրենսդիրը կապել է հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկի հետ, ինչը նշանակում է, որ իմպերատիվ պահանջի պահպանված լինելու հանգամանքը հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերին առաջադրվող պահանջ է:

Նման եզրահանգման պայմաններում գտնում ենք, որ այդ փաստաթղթերից որևէ մեկը օրենքով սահմանված կարգով չներկայացնելը պետք է դատարանի կողմից դիտարկվի որպես **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի** խախտում, այն է՝ *Առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել սույն օրենսգրքով հայցադիմումի ձևին, բովանդակությանը և կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները*:

Այս առումով հարկ է անդրադառնալ նաև պրակտիկ կիրառողների կողմից բարձրաձայնված այն հիմնախնդրին, որը վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, ըստ որի՝ «Առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե հայցվորը չի պահպանել մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգը, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գտնում է, որ վեճի կարգավորման արտադատական կարգ սահմանող պայմանագիրն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ ակնհայտորեն չի կարող կատարվել»:

Հետևաբար, քննարկման առարկա է այն հարցը, *թե արդյոք ի թիվս այլնի՝ ընտանեկան գործերով նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարությունն ինքնին հանդիսանում է վեճի կարգավորման արտադատական կարգ, թե ոչ*:

Հարկ է նշել, որ հաշտարարությունը վեճերի լուծման արդյունավետ և խնայողական մեխանիզմ է, որը թույլ է տալիս կողմերին կանխարգելել վեճի ծագումը կամ լուծել այն՝ հաշվի առնելով կողմերի շահերը և խուսափել այնպիսի լուծումից, որտեղ հաղթող կարող է լինել կողմերից մեկը: Հաշվի առնելով այն իրողությունը, որ հաշտարարությունը տեղի է ունենում դատարանից դուրս, ի տարբերություն դատարանի կողմից նշանակվող հաշտարարության, այս դեպքում այն չի կարգավորվում օրենսդրական բարդ մեխանիզմներով: Հաջող հաշտարարության դեպքում կողմերը հաճախ մրցակցությունից (մեկ կողմն ընդդեմ մյուսի) անցում են կատարում պրակտիկ լուծման (երկու կողմն ընդդեմ խնդրի): Եվ եթե անգամ կողմերին չի հաջողվում կնքել հաշտության համաձայնություն, այս գործընթացն օգնում է նրանց ամբողջական պատկերացում կազմել խնդրի վերաբերյալ և ձերբազատվել անիրագործելի սպասումներից: Հաշտարարությանը բնորոշ է նաև ընթացակարգային ճկունությունը, որը թույլ է տալիս կողմին կողմնորոշվել իր սեփական ցանկությամբ՝ հաշվի առնելով պահանջմունքները և գործի հանգամանքները: Այդ է պատճառը, որ հաշտարարությունը պահանջում է ավելի քիչ ժամանակ և գումար, քան դատական գործընթացը: Կողմերի ուշադրությունը սևեռված է հիմնական խնդրի և կողմերի շահերի վրա: Նրանք կարող են կարգավորել ցանկացած անհստա-

կություն և սահմանել գործնական երկարաժամկետ հարաբերությունների հիմքը⁷:

Իրավագետ Յու. Աշիկյանը նշել է, որ վեճի կարգավորման բոլոր այլընտրանքային եղանակները (Alternative dispute resolution) կոչված են միավորելու ոչ միայն վեճի լուծման նպատակը և սպասվող արդյունքը, այլև խնդրո առարկա եղանակների մասնավոր իրավական բնույթը⁸:

Մեր համոզմամբ՝ հիշյալ հատկանիշները վկայում են այն մասին, որ նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարությունն իրենից ներկայացնում է վեճի լուծման ոչ թե արտադատական, այլ մինչդատական կարգ, որն ունի իրեն բնորոշ հատկանիշները, և որպես փուլ՝ պարտադիր անցնելու պահանջ սահմանած լինելով՝ օրենսդիրը բուն հաշտարարության գործընթացը չի սահմանափակել խիստ իմպերատիվ ընթացակարգերով և կանոններով, ինչն ուղղված է կողմերի համար առավել ազատ միջավայր ստեղծելուն՝ հիմնված ինքնավարության սկզբունքի վրա:

Տեսական գրականության մեջ հաշտարարության բնույթի շուրջ առկա են տարբեր կարծիքներ. իրավագետների մի խումբը գտնում է, որ մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության ինստիտուտը հանդիսանում է վեճի լուծման այլընտրանքային եղանակ, մեկ այլ խումբ գտնում է, որ այն հանդիսանում է արտադատական կարգ:

Օրինակ, Յ. Ա. Շամլիկաշվիլին գտնում է, որ հաշտարարությունը լրացնում է դատական ընթացակարգերին, և գործառույթային իմաստով կոչված է օժանդակելու արդարադատությանը, նպաստելու դատարան դիմելու դեպքում վեճի լուծման արագությանը՝ հիմնված կողմերի շահերի վրա⁹: Միևնույն ժամանակ, հեղինակը չի ժխտում այն, որ հաշտարարությունը հանդիսանում է վեճի լուծման այլընտրանքային եղանակ¹⁰:

Ռուս փաստաբանների մի խումբ գտնում է, որ հաշտարարությունը վեճի կարգավորման այլընտրանքային, արտադատական կարգ է, որն իրականացվում է միջնորդի՝ հաշտարարի միջոցով, ով օգնում է վիճող կողմերին գտնել փոխշահավետ լուծում¹¹:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ հաշտարարությունը վեճերի լուծման արտադատական կարգ է, որի շրջանակում վեճի կողմերը կարող են հանգել փոխընդունելի որոշման: Հաշտարարության ընթացքում հաշտարարը կատարում է անկախ արբիտրի դեր, որով բացատրում է կողմերին կոնկրետ հաշտարարության գործընթացի կիրառման հնարավորությունը¹²:

Տեսաբանների մեկ այլ կարծիքի համաձայն՝ կախված դատական համակարգում հաշտարարության ներմուծման գործընթացից՝ այն կարող է դասակարգվել հետևյալ տեսակների՝ *դատական հաշտարարություն*, որը տեղի է ունենում դատական գործընթացում և այն կարող է իրականացնել դատավորը կամ հաշտարարը, և *արտադատական հաշտարարություն*, որը տեղի է ունենում դատարանից և դատական գործընթացից դուրս՝ հաշտարարի կողմից¹³:

⁷ Տե՛ս Комментарии ЮНСИТРАЛ по медиации (2021 год), Организация Объединенных Наций, Вена, 2021 г., էջ 2:

⁸ Տե՛ս Ашикян Ю.Р., Альтернативные способы урегулирования споров: понятие, виды и механизм функционирования // Инновации. Наука. Образование, 2020. № 14, էջ 239:

⁹ Տե՛ս Шамликашвили Ц.А., Медиация– современный метод внесудебного и досудебного разрешения споров // Библиотечка «Российской газеты». 2021. Вып. 1, январь, էջ 16:

¹⁰ Տե՛ս Шамликашвили Ц.А., Медиация– современный метод внесудебного разрешения споров. М.: Изд. ООО «Межрегиональный центр управленческого и политического консультирования», 2017, էջ 9:

¹¹ Տե՛ս Адвокатская газета, Орган Федеральной палаты адвокатов РФ <http://www.advgazeta.ru/ag-expert/advice/mediatsiya-razreshaem-spory-bez-suda> հղմամբ 28.10.2025 թվականի դրությամբ:

¹² Տե՛ս Общероссийская Общественная Организация, Ассоциация Юристов России, Особенности урегулирования судебных споров онлайн, <https://alrf.ru/articles/preimushchestva-i-osobennosti-uregulirovaniya-sudebnykh-sporov-onlayn> հղմամբ, 28.10.2025 թվականի դրությամբ:

¹³ Տե՛ս Теория и практика медиации (посредничества) в экономической сфере, Минск, Издательский центр БГУ

Նախքան դատարան դիմելը վեճի լուծման արտադատական պարտադիր կարգ նախատեսելը քննարկվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ): Այսպես, ըստ Momčilović ընդդեմ Խորվաթիայի գործի փաստական հանգամանքների՝ Խորվաթիայի օրենսդրությամբ նախատեսված է եղել նախքան պետությունից վնասի փոխհատուցում պահանջող հայց ներկայացնելը վեճը հաշտությամբ կարգավորելու նպատակով Գլխավոր դատախազություն դիմելու պարտադիր պայման¹⁴: Սույն գործով ՄԻԵԴ-ի կողմից արձանագրվել է, որ անմիջապես դատարան դիմելու իրավունքի սահմանափակումը հետապնդել է օրինական նպատակ, այն է՝ նպաստել դատական ծախսերի տնտեսմանը և հնարավորություն տալ կողմերին արդյունավետորեն լուծել վեճը առանց դատարանի ներգրավման¹⁵: ՄԻԵԴ-ի կողմից նաև արձանագրվել է, որ Գլխավոր դատախազության հետ հաշտություն չկնքելու դեպքում կողմերը ազատ են եղել իրավասու դատարան հայց ներկայացնելու հարցում¹⁶: Արդյունքում ՄԻԵԴ-ի կողմից արձանագրվել է, որ դիմումատուի՝ արդար դատաքննության իրավունքը խախտված չէ, քանի որ վերջինս կարող էր վեճի լուծման արտադատական կարգը պահպանելուց հետո դիմել դատարան¹⁷:

Ներպետական դատարանների կողմից մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարությունը պահպանված չլինելու կամ պահպանված լինելու մասին պատշաճ փաստաթղթերը հայցադիմումին կցված չլինելու դեպքերում կիրառվում է ինչպես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, այնպես էլ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը¹⁸:

Մեր համոզմամբ, սակայն, պարտադիր հաշտարարության ինստիտուտը չի հանդիսանում վեճի կարգավորմանն ուղղված արտադատական կարգ, քանի որ ինչպես «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասն է ամրագրում՝ «Հաշտարարությունը գործընթաց է, որն ուղղված է կողմերի համաձայնությամբ իրենց միջև առկա վեճն անկողմնակալ երրորդ անձի՝ հաշտարարի օգնությամբ հաշտությամբ լուծելուն»:

Նշված օրենքում միայն մեկ՝ 9.1-ի հոդվածում է հիշատակվում «արտադատական» արտահայտությունը, այն է՝ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածով նախատեսված փոխկապակցվածության հիմքերի կամ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանգամանքների առկայության հիմքով հաշտարարության ավարտի դեպքում մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության իրականացման պահանջը, ինչպես նաև հաշտարարության համաձայնություն կնքված լինելու դեպքում **վեճի լուծման արտադատական կարգը պահպանված չեն համարվում**, և հաշտարարությունը համարվում է չկայացած»:

Իր հերթին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը մի քանի հոդվածում հիշատակում է վեճի կարգավորման արտադատական կարգի մասին, այն է՝

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **«Այն դեպքերում, երբ օրենքով կամ պայմանագրով նախատեսված է մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման արտադատական կարգ, վեճը**

2015, էջ 116:

¹⁴ Տես MOMČILOVIĆ v. CROATIA գործով, գանգատ թիվ 11239/11, ՄԻԵԴ, 26.03.2015 թվականի որոշում, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-152990> հղմամբ:

¹⁵ Տես նույն տեղում, կետ 46:

¹⁶ Տես նույն տեղում, կետ 52:

¹⁷ Տես նույն տեղում, կետ 57:

¹⁸ Տես, օրինակ, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/8696/02/25 քաղաքացիական գործով 29.08.2025 թվականի որոշումը, թիվ ԵԴ2/10583/02/25 քաղաքացիական գործով 08.10.2025 թվականի որոշումը, www.datalex.am հղմամբ:

կարող է հանձնվել առաջին ատյանի դատարանի քննության այն արտադատական կարգով լուծելուն ուղղված օրենքով կամ պայմանագրով նախատեսված գործողությունները ձեռնարկելու օրվանից երեսուն օրացուցային օր հետո, եթե այլ կարգ կամ ժամկետ սահմանված չէ օրենքով կամ պայմանագրով»,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Առաջին ատյանի դատարանը վերադարձնում է հայցադիմումը, եթե **հայցվորը չի պահպանել մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգը**, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գտնում է, որ վեճի կարգավորման արտադատական կարգ սահմանող պայմանագիրն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ ակնհայտորեն չի կարող կատարվել»,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Այն դեպքերում, **երբ օրենքով կամ կողմերի միջև կնքված պայմանագրով նախատեսված է մինչև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճը կարգավորելու արտադատական կարգ**, դիմողը պարտավոր է՝ 1) հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին դատարանի որոշումն ստանալու օրվանից մեկշաբաթյա ժամկետում կատարել վեճն արտադատական կարգով կարգավորելուն ուղղված օրենքով կամ պայմանագրով նախատեսված գործողությունները. 2) վեճն արտադատական կարգով լուծելու համար օրենքով կամ պայմանագրով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմումում նշված պահանջով հայցադիմում ներկայացնել դատարան»,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ «Դատարանը շահագրգիռ անձի դիմումի հիման վրա եռօրյա ժամկետում վերացնում է հայցի նախնական ապահովման միջոցներն այն դեպքերում, երբ՝ 1) դիմողը սահմանված ժամկետում չի ներկայացնում **վեճն արտադատական կարգով կարգավորելուն ուղղված օրենքով կամ պայմանագրով նախատեսված գործողությունները կատարելու փաստը հաստատող ապացույցներ**»,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «պատասխանողը մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտը հղում է կատարում մինչև դատարան դիմելը **կողմերի միջև առկա վեճի կարգավորման օրենքով կամ պայմանագրով նախատեսված արտադատական կարգը հայցվորի կողմից պահպանված չլինելու հանգամանքին**, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գտնում է, որ վեճի կարգավորման արտադատական կարգ սահմանող պայմանագիրն առ ոչինչ է, ուժը կորցրել է կամ ակնհայտորեն չի կարող կատարվել»,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ «1. Դատարանը հատուկ վարույթի կարգով քննում է հետևյալ գործերը. արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ **արտադատական կարգով** կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ գործերը»,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Դատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ **արտադատական կարգով**, բացառությամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը նոտարի կողմից հաստատելու կարգի, ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է

վերականգնել կորցրած փաստաթղթերը»,

➤ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե հաշտարարության արդյունքով հաշտության համաձայնությունը կնքվել է **արտադատական կարգով**՝ արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ, ապա հաշտարարության յուրաքանչյուր կողմ իրավունք ունի հաշտության համաձայնությունը կնքելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, դիմելու իր բնակության վայրի ընդհանուր իրավասության դատարան՝ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով»:

Վերը նշված հոդվածներում օգտագործում է **«օրենքով կամ պայմանագրով նախատեսված միջև դատարան դիմելը կողմերի միջև առկա վեճի կարգավորման արտադատական կարգ»** և պարզապես **«արտադատական կարգ»** արտահայտությունները՝ սահմանելով նաև այդ կարգը պահպանված չլինելու պայմաններում համապատասխան ընթացակարգային հետևանքներ:

Ընդ որում, մեր համոզմամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության իմաստով «արտադատական կարգը» պահանջում է ոչ միայն օրենսդրական կամ պայմանագրային ամրագրում, այլև կոնկրետ **կարգի** սահմանում, որպիսին հանդիսանում է հաշտարարության ինստիտուտից արտադատական կարգի տարբերակման հիմնական հատկանիշը: Օրինակ, ծննդյան, որդեգրման, ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցման փաստը հաստատող փաստաթղթերի կորսման դեպքում այդ փաստը հաստատող փաստաթղթերի վերականգնումը տեղի է ունենում արտադատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական կացության ակտեր գրանցող մարմինների կողմից «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքով, իսկ արտադատական կարգով այդ փաստի հաստատման անհնարինության դեպքում միայն՝ դատական կարգով: Ընդ որում, օրենսդիրը հստակ սահմանել է պետական իրավասու մարմին դիմելու պայմանները, կարգը, դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, գրանցումը վերականգնելու կարգը, գրանցումը մերժելու հիմքերը (օրենքի գլուխ 13-րդ):

Ինչ վերաբերում է պայմանագրով սահմանված արտադատական կարգին, ապա այստեղ գործ ունենք կողմերի կամքի ազատության սկզբունքի հետ, երբ կողմերն իրենք են որոշում, թե միմյանց միջև ծագած որ վեճերն են ենթակա լուծման արտադատական կարգով, որ մարմնին են վերապահում վեճի լուծումը (որպես կանոն այն հանդիսանում է մասնագիտացված, պրոֆեսիոնալ անձ կամ կառույց), ինչ ժամկետներում՝ սահմանելով հստակ կանոններ, որոնք պետք է պահպանվեն այդ ընթացակարգի շրջանակում:

Խնդրահարույց է այն հարցը, թե արդյոք ընտանեկան գործերով նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարությունն ինքնին հանդիսանում է նույն՝ օրենքով նախատեսված արտադատական ընթացակարգ, թե ոչ՝ այն առումով, որ եթե հաշտարարության միջոցով վեճի կարգավորմանն ուղղված դատարանից դուրս իրականացվող ընթացակարգն էլ մեկնաբանվի որպես «արտադատական», ապա կբախվենք մի խնդրի, որը վերաբերում է նման կարգը պահպանված չլինելու պայմաններում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման կայացման պարտականությանը, ինչն էլ ի տարբերություն նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (երբ չեն պահպանվել հայցադիմումին կից փաստաթղթերին ներկայացվող պահանջները) կիրառման իրավական հետևանքներին՝ ավելի խիստ է: Այն է՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում

է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-12-րդ և 14-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է Առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը: Կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումները վերացնելու հնարավորությունից հայցվորը զրկված էր իր կամքից անկախ պատճառներով»:

Նշված իրավական կարգավորման համատեքստում օրենսդիրը թույլ է տալիս դատարանի կողմից արձանագրված թերությունները շտկելուց հետո հայցադիմումը կրկին ներկայացնել դատարան՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայցադիմումը վերադարձվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-12-րդ և 14-րդ կետերով, ինչը նշանակում է, որ մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության պահանջը պահպանված չլինելը որպես կամ հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերին առաջադրվող պահանջ կամ արտադատական կարգի պահպանվածություն մեկնաբանելը հայցվորի համար առաջացող իրավական հետևանքների իմաստով ունի որոշիչ նշանակություն, և այն դեպքում, երբ դատարանը մեկնաբանի նման պահանջի պահպանված չլինելը որպես արտադատական կարգին ներկայացվող պահանջի խախտում, իսկ հայցադիմումը վերադարձնելու հիմքում դնի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, հայցվորին չի տրամադրվելու եռօրյա ժամկետ հայցադիմումի թերությունը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:

Այուս կողմից հարկ է նկատել, որ հայցադիմումը վերադարձնելու և թերությունները շտկելու համար եռօրյա ժամկետի տրամադրումը կարող է դառնալ ինքնանպատակ այն դեպքում, երբ պարզվի, որ թերությունն իր բնույթով ոչ թե տեխնիկական է, այլ բովանդակային՝ պայմանավորված մինչև դատարան հայց ներկայացնելը հաշտարարին առհասարակ դիմած չլինելով: Ուստի, եթե նախքան հայցադիմում ներկայացնելը կողմերը չեն անցել պարտադիր հաշտարարության փուլն ընդհանրապես, ապա օրենքով սահմանված փաստաթղթերը հայցադիմումին կից ներկայացնելու պարտականությունն օբյեկտիվորեն չի կարող ապահովվել եռօրյա ժամկետում, և այդ դեպքում նման «թերությունը» չի կարող շտկվել այդ ժամանակահատվածում: Այս պարագայում, գտնում ենք, որ հայցվորների կողմից մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության ընթացակարգը սպառած չլինելով հայցադիմում ներկայացնելու բացասական հետևանքների ռիսկը պետք է կրի հենց այդ կողմը, և ստացվում է, որ դատարանի կողմից հայցադիմումին կցման ենթակա փաստաթղթերի ներկայացման պահանջը պահպանված չլինելու հիմքով հայցադիմումը վերադարձնելու պայմաններում հայցվորը պարտավորվելու է դիմել պարտադիր հաշտարարության, և հետագայում ներկայացնել նոր հայցադիմում (տրամաբանորեն եռօրյա ժամկետը լրանալուց հետո, որպիսի պայմաններում հայցադիմումը դատարան է մուտքագրվելու որպես նոր, այլ ոչ թե կրկին ներկայացված):

Եզրակացություն

Այսպիսով, գտնում ենք, որ առաջին՝ մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարությունը չի հանդիսանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով արտադատական կարգ, այլ այն մինչդատական կարգ է, որը պահպանելը կրում է իմպերատիվ բնույթ, երկրորդ՝ մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության պահանջը պահպանված չլինելը պետք է մեկնաբանել որպես հայցադիմումին կից ներկայացման ենթա-

կա փաստաթղթերին առաջադրվող պահանջները պահպանված չլինելու իմաստով, և հայցադիմումը վերադարձնելու հիմքում դնել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ սահմանելով թերությունները շտկելու ժամկետ: Մեր համոզմամբ հայցադիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերին առաջադրվող պահանջները պահպանված չլինելու հետ կապված թերություններ արձանագրելիս, անգամ այն դեպքում, երբ կողմերն առհասարակ չեն անցել պարտադիր հաշտարարություն, դատարանները պետք է ձեռնպահ մնան այնպիսի մեկնաբանություններից, որոնց շրջանակներում կնույնականացնեն մինչև դատարան դիմելը պարտադիր հաշտարարության ինստիտուտը արտադատական կարգի հետ:

Պարտադիր հաշտարարության ինստիտուտի՝ որպես արտադատական կարգ հանդիսանալու հարցի շուրջ տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելը, կապահովի դատական պրակտիկայի միասնականությունը, ինչպես նաև թույլ կտա հայցվորներին պարտադիր հաշտարարությանն առնչվող՝ հայցադիմումի հետ կապված թերությունների արձանագրման դեպքում հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելու պարագայում շտկել թերությունները և այն կրկին ներկայացնել դատարան (եթե նշված ժամանակահատվածում թերությունն օբյեկտիվորեն կարող է շտկվել)՝ ապահովելով դատարանի մատչելիության սկզբունքը:

Այսպիսով, ամփոփելով մեր կողմից կատարված հակիրճ ուսումնասիրությունները՝ կարող ենք արձանագրել, որ չնայած ի թիվս այլնի՝ նաև ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրմանը, ինչպես նաև դրա շարունակական զարգացման իրավական մեծ դերին և նշանակությանը, այդ ոլորտի պատշաճ գործարկման և օրենսդրական մեխանիզմների լիարժեք կիրառման համար անհրաժեշտ են կատարելապես մշակված օրենսդրական կարգավորումներ, որոնք զերծ կլինեն օրենսդրական բացերից, ինչպես նաև կբացառեն օրենքի տարաբնույթ մեկնաբանությունները, ինչն էլ իր հերթին ոչ միայն իրավական պետության կայունության, այլև հատկապես ընտանեկան գործերով՝ երեխայի լավագույն շահերի ապահովման երաշխիքն է:

Ամփոփագիր: Հեղինակի կողմից ուսումնասիրության առակա են դարձել «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները և լրացումները, որոնք վերաբերում են ի թիվս այլ գործերի՝ նաև ընտանեկան վեճերի կարգավորմանն ուղղված պարտադիր հաշտարարության ինստիտուտի ներդրմանը, ինչպես նաև զուգահեռներ են անցկացվել այդ փոփոխություններին համահունչ ՀՀ ընտանեկան օրենսգրքում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունների հետ:

Աշխատանքի ստեղծման գործընթացում օգտագործվել է ինչպես օտարերկրյա գրականություն (հասանելի նաև էլեկտրոնային հղումներով), այնպես էլ ներպետական և միջազգային իրավակիրառ պրակտիկան: Հաշվի են առնվել նաև դատավորների կողմից գործնականում բարձրացվող հարցադրումները:

Հեղինակի կողմից վեր են լուծվել պարտադիր հաշտարարության ներդրման արդյունքում առկա օրենսդրական բացերը, ներկայացվել են պարտադիր հաշտարարության արտադատական կարգ չհանդիսանալու հետ կապված որոշ դիտարկումներ, կատարվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ ինչպես ՀՀ ընտանեկան օրենսգրքում, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հեղինակը հանգել է այն հետևության, որ անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասում, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ իրավահա-

րաբերություններից բխող վեճերով «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախքան դատարան դիմելը պարտադիր հաշտարարությանը դիմելու կարգը պահպանված չլինելու դեպքում հայցադիմումը վերադարձնելու հիմք դիտարկել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ սահմանելով իրավական հնարավորություն նման թերությունն արձանագրելու դեպքում այն շտկելու և հայցադիմումը կրկին դատարան ներկայացնելու համար:

Annotation. The author has studied the amendments and supplements made to the RA Law “On Mediation”, which relate, among other things, to the introduction of the institution of mandatory mediation aimed at the settlement of family disputes, as well as parallels have been drawn with the amendments made to the RA Family Code and the RA Civil Procedure Code in line with these amendments.

In the process of creating the work, both foreign literature (also available via electronic links) and domestic and international legal practice were used. The issues raised by judges in practice were also taken into consideration.

The author has resolved the legislative gaps in the introduction of mandatory mediation, presented some observations related to the extrajudicial procedure of mandatory mediation, and made proposals for legislative amendments to both the RA Family Code and the RA Civil Procedure Code.

As a result of the conducted studies and analyses, the author came to the conclusion that it is necessary to make legislative amendments to Part 2 of Article 68 of the Family Code of the Republic of Armenia, Part 1 of Article 69 of the Family Code of the Republic of Armenia, as well as to consider the grounds for returning the claim in case the procedure for resorting to mandatory mediation before applying to court in accordance with the procedure established by the RA Law “On Mediation” with disputes arising from civil, family, labor, and in cases provided for by law, other legal relationships, as well as to consider Article 127, Part 1, Point 3 of the RA Civil Procedure Code as a basis for the return of the claim, establishing a legal opportunity to correct such a defect and re-submit the claim to the court.

Аннотация. В статье изучаются изменения и дополнения, внесенные в Закон РА «О медиации», касающиеся, в том числе, введения института обязательной медиации, направленной на разрешение семейных споров, а также проводятся параллели с изменениями, внесенными в Семейный кодекс РА и Гражданский процессуальный кодекс РА в соответствии с этими изменениями.

При проведении исследования были использованы как зарубежная литература (в том числе доступная по электронным ссылкам), так и отечественная и международная правовая практика. Также были учтены вопросы, поднимаемые судьями на практике.

Автор предлагает пути устранения законодательных пробелов в вопросе введения обязательной медиации, представляет некоторые замечания, связанные с внесудебной процедурой обязательной медиации, и сделал предложения по внесению законодательных изменений в Семейный кодекс РА и Гражданский процессуальный кодекс РА.

В результате проведенных исследований и анализа автор пришел к выводу о необходимости внесения законодательных изменений в часть 2 статьи 68 Семейного кодекса Республики Армения, часть 1 статьи 69 Семейного кодекса Республики Армения, а также рассмотрения основания для возврата иска в случае нарушения порядка обращения к обязательной медиации до обращения в суд в порядке, установленном Законом РА «О медиации» со спорами, возникающими из гражданских, семейных, трудовых, а в случаях, предусмотренных законом, иных правоотношений, а также рассмотреть пункт 3 части 1 статьи 127 Гражданского процессуального кодекса РА в качестве основания для возврата иска, устанавливающего правовую возможность исправления такого недостатка и повторной подачи иска в суд.

Բանալի բառեր - պարտադիր հաշտարարություն, արտադատական կարգ, հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթեր, հայցադիմումը վերադարձնելու հիմքեր, օրենսդրական բաց, ալիմենտի վճար-

ման և քննազանձման կարգ, լրացուցիչ ծախս, երեխայի լավագույն շահ:

Keywords: mandatory mediation, extrajudicial procedure, documents submitted with the claim, grounds for returning the claim, legislative gap, procedure for payment and collection of alimony, additional expenses, best interests of the child.

Ключевые слова: обязательная медиация, внесудебный порядок, документы, прилагаемые к исковому заявлению, основания для возврата искового заявления, законодательный пробел, порядок уплаты и взыскания алиментов, дополнительные расходы, наилучшие интересы ребенка.

Օգտագործված գրականության ցանկ

1. Ашикян Ю.Р. Альтернативные способы урегулирования споров: понятие, виды и механизм функционирования // Инновации. Наука. Образование, 2020. № 14.
2. Комментарии ЮНСИТРАЛ по медиации (2021 год), Организация Объединенных Наций, Вена, 2021 г..
3. Теория и практика медиации (посредничества) в экономической сфере, Минск, Издательский центр БГУ 2015.
4. Шамликашвили Ц.А. Медиация– современный метод внесудебного и досудебного разрешения споров // Библиотечка «Российской газеты». 2021. Вып. 1, январь.
5. Шамликашвили Ц.А. Медиация– современный метод внесудебного разрешения споров., М.: Изд. ООО «Межрегиональный центр управленческого и политического консультирования», 2017.
6. European Commission For The Efficiency Of Justice (CEPEJ), European Handbook for Mediation Lawmaking, Strasbourg, 13 and 14 June 2019.
7. «Հաշտարարության մասին» 2018 թվականի հունիսի 13-ի ՀՕ-351-Ն օրենք:
8. «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքում 16.11.2022 թվականին ընդունված և 26.12.2022 թվականին ուժի մեջ մտած թիվ ՀՕ-435-Ն օրենք:
9. «Հիմնավորում «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների ընդունման», <https://www.e-draft.am/projects/3259/about> հղմամբ:
10. ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացում կատարելու մասին թիվ ՀՕ-438-Ն օրենք ընդունված 16.11.2022 թվականին:
11. Общероссийская Общественная Организация, Ассоциация Юристов России, Особенности урегулирования судебных споров онлайн, <https://alrf.ru/articles/preimushchestva-i-osobennosti-uregulirovaniya-sudebnykh-sporov-onlayn> հղմամբ:
12. Адвокатская газета, Орган Федеральной палаты адвокатов РФ, <http://www.advgazeta.ru/ag-expert/advice/mediatsiya-razreshaem-spor-by-bez-suda> հղմամբ 28.10.2025 թվականի դրությամբ:
13. ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143, ՍԴԱՈ-209 որոշումներ:
14. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/8696/02/25 քաղաքացիական գործով 29.08.2025 թվականի որոշում, www.datalex.am հղմամբ:
15. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/10583/02/25 քաղաքացիական գործով 08.10.2025 թվականի որոշում www.datalex.am հղմամբ:
16. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/10810/02/25 քաղաքացիական գործով 28.10.2025 թվականի վճիռ, www.datalex.am հղմամբ:
17. Թիվ ԼԴ/1169/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատա-

րանի 24.09.2025 թվականի վճիռ, www.datalex.am հղմամբ:

18. Թիվ ՎԴ/11023/05/19 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2022 թվականի հունիսի 17-ի որոշում, www.datalex.am հղմամբ:

19. Livio Menini, Maria Antonia Rampanelli v Banco Popolare Società Cooperativa գործով, թիվ C-75/16 -75/16 գանգատ, Վերոնայի շրջանային դատարան, Առաջին պալատի 14.06.2017 թվականի վճիռ, <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:62016CJ0075> հղմամբ:

20. MOMČILOVIĆ v. CROATIA գործով, գանգատ թիվ 11239/11, ՄԻԵԴ, 26.03.2015 թվականի որոշում, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-152990> հղմամբ:

Զարգարյան Հ. - ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, էլիասցե՝ hayarpiz@mail.ru, zargaryanhayarpi03@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 13.11.2025 թ., տրվել է գրախոսության 13.11.2025 թ., երաշխավորվել է ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, Հայաստանի ֆրանսիական համալսարանի դասախոս, ՀՀ փաստաբանական ակադեմիայի դասախոս, իրավագիտության թեկնածու Գ. Թորոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 15.01.2026 թ.: